Կազմված է «07» 07.2025թ.
Բաղկացած է 7 թերթից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ

ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՈՍԿԵ ԱԳԱ»
սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության մասնակիցների արտահերթ
ընդհանուր ժողովի 2025թ. Հուլիսի 7-ի
որոշմամբ (Արձանագրություն թիվ 1)

Տնօրեն՝ Արմեն Թաղևոսյան

«07» հուլիսի 2025թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ «05» մայիսի 2005թ.

Գրանցման համար – 271.110.02913
ՀՎՀՀ 01237057
16.12.2009թ-ին գրանցված կանոնադրության թիվ 001/2
փոփոխությունը գրանցված է իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի գործակալության կողմից

«09» 07 2025թ.

աշխատակից՝

«ՈՍԿԵ ԱԳԱ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(նոր խմբագրություն)

2025թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ՈՍԿԵ ԱԳԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (հետագայում՝ Ընկերություն) համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ, որի կանոնադրական կապիտալը բաժանված է սույն կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի:
1.2. Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:
1.3. Ընկերության ֆիրմային անվանումն է՝
հայերեն լրիվ՝ «ՈՍԿԵ ԱԳԱ » սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
կրճատ՝ «ՈՍԿԵ ԱԳԱ» ՍՊԸ
ռուսերեն լրիվ՝ Общество с Ограниченной Ответственностью « ВОСКЕ АГА»
կրճատ՝ ООО «ВОСКЕ АГА»
անգլերեն լրիվ՝ «VOSKE AGA» LIMITED LIABILITY COMPANY
կրճատ՝ «VOSKE AGA» LLC
1.4. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝
0054, ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն, 1-ին թ/մ, 52 շենք, բնակարան 24:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Անձը համարվում է ընկերության մասնակից իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից Ընկերության մասնակիցների գրանցամատյանում նրա որպես այդպիսին գրանցվելու պահից:
2.2. Ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասը փոխանցելը.
2.2.1. Ընկերության մասնակիցն իրավունք ունի իր բաժնեմասը (դրա մասը) վաճառել կամ այլ՝ օրենքով չարգելված ձևով, օտարել Ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների, ինչպես նաև երրորդ անձանց: Ընդ որում, մյուս մասնակիցներն ունեն այդ բաժնեմասը նույն գնով ձեռքբերման նախապատվության իրավունք՝ Ընկերության կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համամասնորեն: Եթե Ընկերության մյուս մասնակիցները չեն օգտագործել բաժնեմասը (դրա մասը) գնելու իրենց նախապատվության իրավունքը կամ այն օգտագործել են մասամբ, ապա Ընկերությունն ունի այդ բաժնեմասը նույն գնով ձեռքբերման նախապատվության իրավունք:
2.2.2. Երրորդ անձանց օտարման անհնարինության դեպքում մասնակցի պահանջով Ընկերությունն ինքը պարտավոր է ձեռք բերել մասնակցի բաժնեմասը, այն իրացնել մեկ տարվա ընթացքում այլ մասնակիցների կամ երրորդ անձանց կամ որոշում ընդունել բաժնեմասի չբաշխված մասի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման մասին:
2.2.3. Նախապատվության իրավունքի (այլ մասնակիցների կողմից վաճառվող բաժնեմասերի ձեռքբերման) իրականացման ժամկետը սահմանվում է մեկ ամիս:

2.3. Ընկերությունից դուրս եկող մասնակցի բաժնեմասը դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից փոխանցվում է ընկերությանը:
2.4. Ընկերության մասնակիցները կարող են տեղեկություններ ստանալ, ընկերության գործունեության մասին գաղտնի փաստաթղթերից բացի, ծանոթանալ հաշվապահական հաշվառման, հաշվետվության, ընկերության արտադրատնտեսական գործունեության այլ փաստաթղթերի հետ:
2.5. Ընկերության մասնակիցները պարտավոր են՝
– Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի սահմանված կարգի համաձայն կատարել ներդրումներ Ընկերության կանոնադրական կապիտալում:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

3.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 52,750,000 (հիսուներկու միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, որը բաժանված է 26,375,000 (քսանվեց միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով երկու բաժնեմասերի: Ընկերության կանոնադրական կապիտալը լրիվ վճարված է և դրանք ամբողջապես պատկանում են Ընկերության մասնակիցներին: Ընկերության մասնակիցներն են Արմեն Համլետի Թադևոսյանը (Ն.ք. 010826675 տրված 07.05.2019թ. 011-ի կողմից, ՀԾՀ 3505830178)՝ ում պատկանում է 1 բաժնեմաս 26,375,000 ՀՀ դրամ անվանական արժեքով և Արմեն Սուրենի Ծատուրյանը (ք. Երևան Արամի 48շ. բն 36, ն/ք 014562268 տրված 29.07.2022թ-ին 099 կողմից, ՀԾՀ 3507800829) ում պատկանում է 1 բաժնեմաս 26,375,000 ՀՀ դրամ անվանական արժեքով:
3.2. Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող ընկերության գույքի նվազագույն չափը:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

4.1. Ընկերության կառավարման մարմիններն են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը, Խորհուրդը և Ընկերության գործադիր մարմինը՝ տնօրենը:
4.2. Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:
4.3. Ընկերության մասնակիցների հերթական ընդհանուր ժողովը հրավիրում է Ընկերության տնօրենի կողմից տարեկան մեկ անգամ ֆինանսական տարվա ավարտից ոչ շուտ, քան երկու ամիս ոչ ուշ, քան չորս ամիս անց: Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել մասնակիցների հերթական ընդհանուր ժողովը՝ Ընկերության գործունեության տարեկան արդյունքները հաստատելու համար:
4.4. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որն ընտրվում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից:
4.5. Տնօրենը իրավունք ունի առանց լիազորության գործարքներ կատարել Ընկերության անունից, եթե գործարքի գումարը չի գերազանցում ընկերության զուտ ակտիվների մեծության 25%-ը:

5. ԽՈՐՀՈՒՐԴԸ

5.1. Ընկերությունում ձևավորվում է Խորհուրդ, որի իրավասությանն է պատկանում Ընկերության գործունեության ընդհանուր կառավարման հետ կապված խնդիրների լուծումը, բացառությամբ այն խնդիրների, որոնք հանդիսանում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունը:

5.2. Խորհուրդը բաղկացած է 3 (երեք) անդամից, որոնցից առնվազն մեկը պետք է հանդիսանա անկախ խորհրդի անդամ:

5.3. Խորհրդի անդամների նշանակումը, պաշտոնավարման ժամկետը և լիազորությունների դադարեցումը, բացի օրենքի համաձայն դրա իրավունքն ունեցող բաժնետիրոջ կողմից որպես խորհրդի անդամ ներգրավվելու կամ խորհրդի անդամ նշանակելու և լիազորությունները դադարեցնելու դեպքերից, սահմանվում է Ընդհանուր Ժողովի որոշմամբ:

5.4. Ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերության խորհրդի անդամների համար կարող է սահմանվել վարձատրություն կամ փոխհատուցում նրանց այն ծախսերի դիմաց, որոնք կապված են Ընկերության խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Դրանց չափերը և վճարման կարգը սահմանվում է Ընդհանուր ժողովի որոշմամբ:

5.5. Ընկերության խորհրդի իրավասությանն են պատկանում.

5.5.1. Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը

5.5.2. Ընկերության գործունեության ընդհանուր քաղաքականությունների ընդունումը, ընդ որում՝ քաղաքականությունները կարող են ընդունվել ինչպես աշխատանքների ներքին կազմակերպման, այնպես էլ ընկերության գործունեության բոլոր ոլորտների և ուղղությունների վերաբերյալ,

5.5.3. Ընկերության գործունեության հետ կապված կարգերի, ընթացակարգերի և կանոնակարգերի ընդունումը,

5.5.4. Ընկերության մասնակիցների տարեկան և արտահերթ Ժողովների գումարումը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի,

5.5.5. Ժողովների օրակարգի հաստատումը,

5.5.6. Ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են Ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը օրենքի դրույթների համապատասխան,

5.5.7. այն հարցերի ներկայացումը ժողովի քննարկմանը, որոնց ներկայացումն օրենքով վերապահված է խորհրդին,

5.5.8. Ընկերության գույքի շուկայական արժեքի որոշումը,

5.5.9. Պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը,

5.5.10. Ընկերության գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների կնքման վերաբերյալ որոշման ընդունումը, այն դեպքում, երբ գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը գործարքը կնքելու պահին կազմում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 26-ից (քսանվեց) 50 (հիսուն) տոկոսը,

5.5.11. Ընկերության փայերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը՝ Օրենքով նախատեսված դեպքերում,

5.5.12. միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը, միջանկյալ շահութաբաժինների վճարման վերաբերյալ որոշման ընդունումը,

5.5.13. տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ Ժողովի առաջարկությունների տրամադրումը,

5.5.14. Ընկերության կողմից մասնակիցերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը,

5.5.15. Ընկերության վարչակազմակերպչական կառուցվածքի և աշխատակիցների հաստիքացուցակի հաստատումը,

5.5.16. Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,

5.5.17. Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.

5.5.18. Խորհրդին կից հանձնաժողովների ձևավորումը, այդ թվում՝ աուդիտի,

5.5.19. Տնօրենի կողմից Խորհրդին ներկայացվող հաշվետվությունների ցանկի և պարբերականության սահմանումը,

5.5.20. ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,

5.5.21. Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը, բացառությամբ ժողովի իրավասությանը պատկանող կանոնակարգող ներքին փաստաթղթերի,

5.5.22. Ընկերության կողմից դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը, այդ ընկերություններում մասնակցությունը, եթե այդ մասնակցությունը խոշոր գործարք չէ,

5.5.23. այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունը խոշոր գործարք չէ,

5.5.24. Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը, գործունեության դադարեցումը, դրանց կանոնադրությունների հաստատումը,

5.5.25. Ընկերության ղեկավար անձանց և աշխատակիցների գործունեությունը կարգավորող ներքին կանոնների և կանոնակարգերի, առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնակարգերի հաստատումը,

5.5.26. Իրականացնում է Օրենսգրքով, Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

5.6. Խորհուրդն իր որոշմամբ իրավասու է ստեղծել խորհրդին կից գործող մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ: Հանձնաժողովները նպատակ ունեն բարելավել խորհրդի գործունեությունը և առանցքային հարցերի վերաբերյալ տրամադրում են ավելի խորը փորձաքննություն: Հանձնաժողովները կարող են կազմված լինել խորհրդի անդամներից և այլ անձանցից, այդ թվում, չսահմանափակելով՝ Ընկերության Գլխավոր տնօրենից, Տնօրինության անդամներից, Ընկերության աշխատակիցներից, այլ փորձագետներից կամ մասնագետներից: Հանձնաժողովները ստեղծվելու են որոշակի ոլորտի հարցերի կարգավորման և լուծման, ինչպես նաև կոորդինացման համար՝ խորհրդին խորհրդատվական և մասնագիտական կարծիք տրամադրելու նպատակով:

5.7. Խորհրդի նախագահին ընտրում են խորհրդի անդամները, խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

5.8. Ընկերության խորհրդի նախագահը.

5.8.1. կազմակերպում է խորհրդի աշխատանքները,

5.8.2. գումարում է խորհրդի նիստերը և նախագահում է դրանցում,

5.8.3. կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը,

5.8.4. սահմանում և հաստատում է խորհրդի օրակարգը,

5.8.5. խորհրդում խթանում է բազմազանության և ներառականության մշակույթը,

5.8.6. խրախուսում է խորհրդի բոլոր անդամների ներգրավվածությունը խորհրդի նիստերին՝ հիմնվելով նրանց հմտությունների, փորձի և գիտելիքների վրա,

5.8.7. գործադիր մարմնի ղեկավարի հետ զարգացնում և ամրապնդում է արդյունավետ աշխատանքային հարաբերություններ, հարգելով վերջինիս պատասխանատվության շրջանակները՝ տրամադրում խորհրդատվական աջակցություն,

5.8.8. նախագահում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովներում,

5.8.9. կատարում է սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

5.9. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները խորհրդի որոշմամբ կատարում է խորհրդի անդամներից մեկը:

5.10. Ընկերության Խորհրդի նիստերը գումարվում են Ընկերության Խորհրդի նախագահի նախաձեռնությամբ, Խորհրդի անդամի, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի, արտաքին աուդիտն իրականացնող անձի, Գլխավոր տնօրենի, Տնօրինության պահանջով, նվազագույնը երեք ամիսը մեկ անգամ:

5.11. Խորհրդի նիստը իրավազոր է, եթե նիստին մասնակցում են Խորհրդի անդամների կեսից ավելին:

5.12. Քվեարկության ժամանակ Խորհրդի անդամն ունի մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն Ընկերության Խորհրդի մեկ անդամից Խորհրդի մյուս անդամին չի թույլատրվում:

5.13. Ընկերության Խորհրդի նիստերին որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

5.14. Ընկերության Խորհրդի նիստերը գումարվում և անց են կացվում Ընկերության Խորհրդի կանոնակարգին համապատասխան, որը հաստատվում է Ընդհանուր ժողովի կողմից: Ընկերության Խորհրդի նիստերն արձանագրվում են նիստի ավարտից 5 օրյա ժամկետում:

5.15. Նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

5.16. Խորհրդի անդամները պետք է իրենց լիազորությունները իրականացնեն անձամբ:

5.17. Խորհրդի անդամները պետք է գործեն լիարժեք տեղեկացված, բարեխղճորեն, պատշաճ ջանասիրությամբ և ողջամտորեն՝ ելնելով կազմակերպության ու մասնակիցների լավագույն շահերից և հաշվի առնելով կազմակերպության շահակիցների շահերը:

«ՈՍԿԵ ԱԳԱ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

միակ մասակցի տվյալները

Մասնակցի անունը,ազգանունը,անձնագրային տվյալները,հասցեն	Բաժնեմասերի քանակը	Բաժնեմասերի չափը, %	Ստորագրություն
1. Արմեն Համլետի Թադևոսյան, Նույնականացման քարտ՝ 010826675, տրված 011 կոդմից 07.05.2019թ., ՀԾՀ 3505830178, ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 52շ. 24բն	1	50%	
2. Արմեն Սուրենի Ծատուրյան, Նույնականացման քարտ 014562268, տրված 099 կոդմից 29.07.2022թ-ին ՀԾՀ 3507800829, ՀՀ, ք. Երևան, Արամի 48շ. 36 բն	1	50%	